



**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Բովանդակություն

1. Ներածություն
2. Կրթության որակ հասկացությունը
3. Կրթության որակի կարևորումը միջազգային փաստաթղթերում
4. Կրթության որակի սահմանումը այլ երկրների օրենսդրության մեջ
5. Հայաստանում կրթության որակի սահմանումը
6. Կրթության որակի սկզբունքերը
7. Կրթության որակի բաղադրիչների ընկալումները Հայաստանի հանրակրթական համակարգում
8. Առաջարկություններ

Ներածություն

Այս հետազոտության նպատակն է վերլուծել Հայաստանի հանրակրթական համակարգում կրթության որակ հասկացության ընկալումը օրենսդիրների, գործադիրների և իրականացնողների մակարդակում: Հետազոտությունը վերլուծել է կրթության որակ հասկացությունը, դրա կարևորումը միջազգային փաստաթղթերում և կրթության որակի սահմանումները այլ երկրների օրենսդրությունների մեջ: Այդ նպատակով վերլուծվել են կրթության որակի վերաբերյալ մի շարք գիտական աշխատություններ (Spanbauer S. J. (1992) *A Quality System for Education*. Milwaukee, Wisconsin: ASQC Quality Press. Murgatroyd S. & Morgan C. (1994) *Total Quality Management and the School*. Buckingham/Philadelphia: Open University Press.), միջազգային փաստաթղթեր՝ Յունեսկո-ի Կրթության մեջ խտրականության բացառման մասին կոնվենցիան (1960թ.), Մարդու իրավունքների համաշխարհային կոնֆերանսի (1993թ.) կողմից ընդունված Վիեննայի հայտարարագիրը, ԵՄ Կրթության և ուսուցման 2020թ. ռազմավարությունը, ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոնվենցիան, Յունեսկոյի Դեկարի շրջանակային գործողությունների մասին փաստաթուղթը (2000թ.) և այլն:

Կատարվել է որակական հետազոտություն: Հետազոտության շրջանակներում իրականացվել են հարցազրույցներ կրթության որակի սահմանման նախաձեռնությամբ հանդես եկած օրենսդիր մարմնի ներկայացուցիչների, ԿԳՆ պատասխանատուների հետ, ինչպես նաև վեց ֆոկլուս խմբեր՝ ուսուցիչների մասնակցությամբ, որտեղ փորձ է կատարվել պարզել նրանց ընկալումները կրթության որակի վերաբերյալ և տեղեկացվածության աստիճանը կրթության մասին օրենքի փոփոխություններից:

Կրթության որակ հասկացությունը

Կրթության որակը բավականին բարդ ու տարողունակ մի հասկացություն է, որի կարևորությունը շեշտվում է նաև կրթությանն առնչվող միջազգային տարբեր փաստաթղթերում, ինչպես նաև տեղական օրենսդրություններում: Կրթության որակ սահմանելով օրենսդիրները հիմնականում նպատակ են ունենում սահմանել կրթության չափելի արդյունքներ, որոնք, կախված երկրից ու համատեքստից, որոշակիորեն տարբերվում են՝ չնայած նրանք հիմնականում փորձում են դրանք համապատասխանեցնել ՄԱԿ-ի տարբեր կառույցներում կրթության որակի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի տրամաբանությանը:

Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման: Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով: Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու մոդելների ստեղծման ու զարգացման:

Յունեսկոյի միջազգային աշխատանքային խմբի կողմից 2000թ. Ֆլորենցիայում ընդունված կրթության որակի սահմանման մասին փաստաթղթում նշվում է, որ կրթության որակը շատ դեպքերում կախված է համատեքստից, ինչպես նաև տարբեր շահառուների (հատկապես՝ ծնողների) կողմից առաջ քաշվող պահանջներից ու կրթության որակի վերաբերյալ սեփական ըմբռնումներից: Կրթությունը այնպիսի մի ոլորտ է, որը չի շրջանցում հասարակության որևէ անդամի, և այդ անդամներից յուրաքանչյուրը ոչ միայն փորձում է առավելագույնս ստանալ այդ գործընթացից, այլ նաև ունենալ սեփական մոտեցումները լսելի դարձնելու մեխանիզմներ՝ այդ գործընթացների վրա ազդելու տեսանկյունից: Այդ առումով կրթության որակի ապահովման համար պետք է գործառնեն թափանցիկ ու հաշվետվողական համակարգեր ու մեխանիզմներ, որոնք

տարբեր շահառուների մասնակիցը կդարձնեն կրթական գործընթացին և վերջիվերջո նրանց կբավարարեն: Հասկանալի է, որ որևէ կրթական համակարգ չի կարող բավարարել բոլոր շահառուներին, սակայն նրանց մեծամասնության պարագայում կարելի է ասել, որ մեխանիզմը աշխատում է:

Կրթության որակի չափման համար հաճախ հետազոտողները հիմք են վերցնում տարբեր երկրների կրթական համակարգերի համեմատականության սկզբունքը, համաձայն որի ինչու է մի երկրի (օրինակ՝ ԱՄՆ կամ Մեծ Բրիտանիա) կրթական հաստատությունների պահանջն այդքան մեծ է ողջ աշխարհում, իսկ այլ երկրների կրթական հաստատությունները բավարարվում են միայն «տեղական շուկայով»: Նշված երկրների կրթական հաստատությունների միջազգային բնույթը և տարբեր դասակարգումներում առաջնային դիրքերի զբաղեցումը պայմանավորված է հենց նրանց որակյալ կրթության ապահովման քաղաքականությամբ, իսկ այդ քաղաքականության իրականացման համար այդ երկրները և կրթական հաստատություններն ունեն հստակ ամրագրված ռազմավարություն և չափորոշիչներ, որոնց իրականացմանը հետամուտ են լինում:

Համաշխարհային բանկը նույնպես փորձել է տալ կրթություն որակի սահմանումն իր «Կրթության առաջնահերթություններ և ռազմավարություններ» (1995թ.) զեկույցում հետևյալ ձևակերպմամբ. «Կրթության որակը դժվար է սահմանել եւ չափել: Համարժեք սահմանումը պետք է ներառի ուսանողների գիտելիքների արդյունքները: Շատ մանկավարժներ կարող են սահմանման մեջ ներառել կրթական փորձառությունը, որը օգնում է ստանալ կրթական այդ արդյունքները, այլ կերպ ասած՝ կրթական միջավայրը» (Համաշխարհային բանկ, 1995 թ., էջ 46):

ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին ՀՀ օրենքի 5-րդ բաժնի 10րդ կետը սահմանում է. «Հանրակրթության և նախնական մասնագիտական կրթության ոլորտում հիմնական գերակայությունը որակի բարձրացումն է, որի նախապայմանն է ուսումնական հաստատությունների կողմից կրթական առաքելության գիտակցումը:

Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից, և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու

կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում է նշվում են հետևյալ հիմնական կետերը.

- 1) կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում,
- 2) հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում,
- 3) բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներ,
- 4) կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում:

Կան նաև շատ այլ զեկույցներ և հրապարակումներ, որոնք կրթության որակը քննում են որակի գնահատման և զարգացման տեսանկյունից: Սպանբաուերը նշում է, որ դպրոցները պետք է ունենան որակի ապահովման քաղաքականություն և իբրև օրինակ է բերում Ֆոքս Վելի տեխնիկական քոլեջը, որը բարձրագույն կրթության չափանիշներին համաձայն տրամադրում է կրթության որակի հետ կապված ցուցումներ և հրահանգներ¹:

Մորգատրոյդը և Մորգանը քննարկում են կրթության որակի երեք հիմնական սահմանումները. ա) Որակի ապահովումը վերաբերում է չափորոշիչների, համապատասխան մեթոդների սահմանմանը և փորձագիտական մարմնի կողմից որակի պահանջների պահպանմանը, որը իրականացվում է ստուգման կամ գնահատման եղանակով, որով քննվում է պրակտիկայի համապատասխանությունը չափորոշիչներին, բ) ... համապատասխանություն պայմանագրին, որտեղ կրթության որակի որոշ չափանիշներ հստակեցված են պայմանագրի ստորագրման բանակցությունների ընթացքում, գ) սպառողի կողմից թելադրված որակի, որը ենթարդում է, որ ծառայության սպառողն ինքն է սահմանում իր սպասելիքներն այդ ծառայության որակից և որակը սահմանվում է այն չափը, որը համապատասխանում կամ գերազանցում է սպառողների սպասումները²: Մորգատրոյդը և Մորգանը պնդում են, որ որակի հասկացությունը

¹ Spanbauer S. J. (1992) *A Quality System for Education*. Milwaukee, Wisconsin: ASQC Quality Press, p.11.

² Murgatroyd S. & Morgan C. (1994) *Total Quality Management and the School*. Buckingham/Philadelphia: Open University Press, p. 45-46.

ենթարկվում է զարգացման «որակի ապահովումից» մինչև «համապատասխանեցում պայմանագրին» և առավել կարևորվում է սպառողի մոտեցումը այս հարցում: Նմանատիպ մոտեցման վրա ազդել են տնտեսական տեսությունների վրա հիմնված մոտեցումները: Հետաքրքրական է, որ նմանատիպ մոտեցումների հեղինակները չեն քննարկում կրթության որակի բովանդակային կողմը, այլ մեթոդները և կազմակերպական մոդելները:

Որակի սահմանման մեկ այլ մոտեցում էլ առաջ է քաշում այն հարցադրումը, թե արդյոք կրթության որակը միայն լավ սովորելն է, թե ոչ: Սակայն այստեղ հարց է առաջանում նույն սովորածի բովանդակային կողմի վերաբերյալ: Այս տեսանկյունից կրթության որակը պետքական գիտելիքների արդյունավետ յուրացումն է: Պետք է նշել, որ կրթությունը աշխարհի շատ երկրներում չի առնչվում կյանքի հմտությունների հետ, օրինակ, Աֆրիկայում շատ երեխաների համար որակյալ կրթություն կարող է համարվել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների յուրացումը, որը նրանց կօգնի պաշտպանել իրենց առողջությունը:

Կրթության որակի կարևորումը միջազգային փաստաթղթերում

Միջազգային տարբեր փաստաթղթեր մինչև կրթության որակին անդրադառնալը շեշտում են կրթության անօտարելի իրավունքը, որպես մարդու իրավունքների կարևորագույն մի ոլորտ և շատ դեպքերում հենց մարդու իրավունքների համատեքստում էլ դիտարկվում է կրթության իրավունքը և հետևաբար նաև որակյալ կրթության իրավունքի իրացումը: Այսպես, Յունեսկո-ի Կրթության մեջ խտրականության բացառման մասին կոնվենցիան (1960թ.) առաջին իրավական փաստաթուղթն է կրթության ոլորտում, որը հստակորեն սահմանում է որակյալ կրթության անհրաժեշտությունը: Նմանապես, Յունեսկո-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն ճանաչում է կրթության որակը որպես կրթության իրավունքի հիմնական բաղադրիչ. «առաջարկվող կրթությունը պետք է համապատասխան որակ ունենա, համապատասխանի երեխայի պահանջներին և նպաստի երեխայի այլ իրավունքների իրացմանը» (Ընդհանուր մեկնաբանություն No. 11 (1999թ.), պարագ. 6):

Մարդու իրավունքների համաշխարհային կոնֆերանսի (1993թ.) կողմից ընդունված Վիեննայի հայտարարագիրը և գործողությունների ծրագիրը ճանաչում է որակյալ

կրթությունն ստանալու յուրաքանչյուր մարդու իրավունքը: Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման շրջանակում պետությունները պարտավորվել են ապահովել որակյալ կրթություն «բոլոր երեխաների համար հավասար կրթական հնարավորություններ ստեղծելով և երաշխավորելով որակյալ կրթությունը և դրա զարգացումը կրթական համակարգում»³:

2012թ. Սկսված ՄԱԿ գլոբալ կրթական առաջին նախաձեռնությունը որակյալ կրթության զարգացումը սահմանել է որպես իր առաջնահերթություններից մեկը:

Եվրոպական միությունը սահմանել է մի շարք հանձնարարականներ Կրթության և ուսուցման 2020թ. ռազմավարության մեջ: ԵՄ երիտասարդական կոնֆերանսները 2013թ. նույնպես կոչ էին արել ապահովել կրթության մատչելիությունը և որակյալ կրթության անհրաժեշտությունը⁴:

ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոնվենցիայի 28-րդ հոդվածը շեշտում է, որ պետությունները պետք է ապահովեն անվճար տարրական կրթություն: Նույն կոնվենցիայի 29-րդ հոդվածը պետություններից պահանջում է ճանաչել, որ կրթությունը պետք է նպատակաուղղված լինի զարգացնելու երեխայի անհատականությունը և կարողությունները, պատրաստի երեխային ակտիվ կենսագործունեության, ամրապնդի հիմնարար մարդու իրավունքները և նպաստի երեխայի՝ իր սեփական և այլոց մշակութային ու ազգային արժեքների նկատմամբ հարգանքին (ՄԱԿ, 1989թ.):

2000թ. ապրիլի 24-28-ը Դակարում տեղի ունեցած Յունեսկոյի համաշխարհային կրթական ֆորումում ընդունվեց Դակարի շրջանակային գործողությունների մասին փաստաթուղթը, որտեղ սահմանվեց կրթության որակը մի քանի պարամետրերով: Համաձայն այս փաստաթղթի կրթության որակը կախված է կրթության գործի բաղադրիչներ հանդիսացող մի շարք փոխկապակցված գործոնների կամ ակտորների որակից, այն է՝ սովորողների որակ, կրթական ծրագրերի որակ (ներառյալ գնահատումը և նյութերը), ուսուցման գործընթացի որակ (ուսուցիչներ և տեխնոլոգիաներ) և կրթական միջավայրի որակ (աշակերտակենտրոնություն, առողջություն, ապահովություն, գենդերային հարցերի նկատմամբ պատշաճ վերաբերմունք):

³ Report of the United Nations Special Rapporteur on the Right to Education: Normative Action for Quality Education (2012, page 9).

⁴ Կոնֆերանսներից մեկը հրավիրվել է 2013թ. մարտին Հունաստանի ղեկավարությամբ, իսկ երկրորդը՝ սեպտեմբերին՝ Լիտվայի հովանու ներքո:

- Յունեսկոն սահմանել է նաև որակյալ կրթության հիմնասյուները, որոնք են
- ա) սովորել իմանալու համար, որը ենթադրում է ամենօրյա գիտելիքների զարգացում,
 - բ) սովորել անելու համար, որը ենթադրում է գիտելիքների պրակտիկ իրագործում,
 - գ) սովորել համատեղ ապրելու համար, որը ենթադրում է այնպիսի կենսակերպի կառուցում, որտեղ չկա խտրականություն և կան զարգացման հավասար հնարավորություններ,
 - դ) սովորել լինելու համար, որը ենթադրում է այնպիսի հմտություններ, որոնք հնարավորություն կտան անհատին զարգացնելու իր ողջ հնարավորությունները:

Յունեսկոն խթանում է որակյալ կրթության տրամադրումը և զարգացումը որպես մարդու իրավունքների անքակտելի բաղադրիչ և խրախուսում է կրթական բոլոր գործողությունները կատարել հենց մարդու իրավունքների զարգացման ու պաշտպանության տեսանկյունից: Կրթությունը իբրև մարդու իրավունք ենթադրում է մասնակցայնություն որակյալ կրթության մեջ, մարդու իրավունքների մասին պրակտիկ գիտելիքներ, կրթությունը որպես իրավունք, որը խթանում այլ իրավունքների իրացման հնարավորությանը:

Կրթության որակի սահմանումը այլ երկրների օրենսդրության մեջ

Վրաստանի հանրապետությունում տեղի ունեցող կրթական բարեփոխումները չեն շրջանցել կրթության որակի հիմնահարցը և 2010թ. հուլիսին ընդունվել է առանձին օրենք կրթության որակի զարգացման վերաբերյալ: Օրենքի նպատակն է սահմանել կրթության որակի զարգացման մեխանիզմները, որոնք ներքին ու արտաքին են: Օրենքով սահմանվում են Կրթության որակի բարձրացման ազգային կենտրոնի գործունեությունն ու գործառույթները, որը պետք է իրականացնի կրթական հաստատությունների լիցենզավորում և կրթական ծրագրերի ակրեդիտացիա: Լիցենզավորումն իրականացվում է կրթական ծրագրերի, նյութական ռեսուրսների, մարդկային ռեսուրսների առկայության պարագայում: Ակրեդիտացիա նպատակն է համակարգային ինքնազնահատման համակարգի ներդրումը, որը կապահովի որակյալ կրթություն կրթական ծրագրերը

համապատասխանեցնելով ակրեդիտացիայի պահանջներին: Կառավարությունը ֆինանսական աջակցություն է ցույց տալիս միայն ակրեդիտացիա անցած կրթական ծրագրերին: Ակրեդիտացիան չափանիշներն են կրթական ծրագրերը, ուսուցման մեթոդաբանությունը և կազմակերպումը, ուսանողների հաջողությունները և անհատական աշխատանքը նրանց հետ, ուսուցման հետ կապված ռեսուրսները, որակյալ կրթություն զարգացնելու ունակությունը:

Չնայած օրենքի առկայությանը, այդուհանդերձ, օրենքի սստեղծողները ձեռնպահ են մնացել կրթության որակ հասկացության սահմանումից և բավարարվել են կրթության որակի զարգացման մեխանիզմները սահմանելով:

Լիտվայի կրթության մասին օրենքում առկա է հոդված 37-ը կրթության որակի վերաբերյալ, որը, սակայն չի սահմանում այդ հասկացությունը: Օրենքը նշում է կրթության որակի պատասխանատվությունը կրում է կրթություն տրամադրող հաստատությունը: Մինևույն ժամանակ օրենքը երաշխավորում է ֆորմալ կրթության որակը և մասնակիորեն նաև ոչ-ֆորմալ կրթության որակը: Կրթության որակի ապահովման համար օրենքը պահանջում է իրականացնել կրթության մոնիտորինգ, հետազոտություն, ներքին և արտաքին գնահատում, կրթական հաստատությունների ղեկավարների և ուսուցիչների գործունեության գնահատում, կրթական արդյունքների գնահատում:

Մեծ Բրիտանիան ընդունել է բարձրագույն կրթության որակի կոդ, որը բավականին համապարփակ փաստաթուղթ է և որակի ապահովման կանոններ է պարունակում բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, պաշտպանում է ուսանողների շահերը, ինչպես նաև հետազոտական աստիճանների շնորհման որակի հետ կապված խնդիրները: Փաստաթղթում առանձնահատուկ ուշադրության է դարձվում կրթական գործընթացի և աստիճանաշնորհման թափանցիկությանը, ակադեմիական ստանդարտների պահպանմանը, հաշվետվողականությանը, վերջնարդյունքներին: Փաստաթուղթը ռազմավարական նշանակություն ունի, քանի որ այն շեշտադրում է բոլոր այն կարևոր անհրաժեշտ մեխանիզմները կրթությունը առավել մատչելի, թափանցիկ ու արդյունավետ դարձնելու համար: Չնայած նրան, որ այս սկզբունքները հիմնականում վերաբերում են բարձրագույն կրթական համակարգին, այնուամենայնիվ դրանք տարածվում են նաև հանրակրթական ոլորտի վրա:

Հայաստանում կրթության որակի սահմանումը

Մեծ թիվ չեն կազմում այն պետությունները, որտեղ օրենքով սահմանված է կրթության որակ հասկացությունը՝ ելնելով դրա բարդ բնույթից: Հայաստանում 2016թ. մարտի 16-ին ընդունվել է կրթության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքը, որտեղ սահմանվել է կրթության որակ հասկացությունը: Այսպես, օրենքի հոդված 3-ի 10-րդ կետը սահմանում է.

«կրթության որակ՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը եւ ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների»: Նույն օրենքի 37-րդ հոդվածի 2.1 ենթակետը նշում է. «սահմանում է կրթության որակի գնահատման չափանիշները՝ ըստ ուղղությունների: Դրանք կարող են հիմք դառնալ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները սահմանելու համար»:

Այս հետազոտության շրջանակներում առավելապես կանգ ենք առնելու ոչ թե կրթության որակ հասկացության ձևակերպման վրա, քանի որ դրանք կարող են բազմաբնույթ լինել, այլ առավելապես օրենքով սահմանված չափելի արդյունքի ստացմանը միտված ցուցիչների վերլուծությունը և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում այդ ցուցիչների բովանդակային կողմի վերլուծությանը և, հնարավորության պարագայում, նոր ցուցիչների ավելացմանը:

Պետք է նշել, որ կրթության որակի վերը նշված ցուցիչները վերցվել են Յունիսեֆի կողմից սահմանված կրթության որակի ցուցիչներից, որտեղ մասնավորապես նշվում են որակյալ կրթության հետևյալ հիմնական ցուցիչները.

- Առողջ և լավ սնված սովորողներ, որոնք պատրաստ են մասնակցել և սովորել և սովորելու համար նրանք աջակցություն են ստանում իրենց ընտանիքների ու համայնքների կողմից,

- Առողջ, ապահով, աջակցող և գենդերային հարցերում զգայուն միջավայր՝ ապահովված համապատասխան ռեսուրսներով և հարմարություններով,

- Բովանդակություն, որը արտացոլված է համապատասխան ուսումնական ծրագրերում և նյութերում, որոնք միտված են հիմնարար հմտությունների ձեռքբերմանը, հատկապես գրագիտություն, թվաբանություն եւ կյանքի հմտություններ և գիտելիքներ այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են սեռը, առողջությունը, սննդակարգը, ՄԻԱՎ / ՋԻԱՀ-ի կանխարգելումը և խաղաղության հաստատումը:

- Գործընթացներ, որոնց միջոցով վերապատրաստված ուսուցիչները օգտագործում են աշակերտակենտրոն ուսուցում լավ կահավորված դասասենյակներում և դպրոցներում, ինչպես նաև հմուտ կերպով իրականացնում են գնահատում՝ նպաստելու ուսուցմանը և նվազեցնելու անհավասարությունները:

- Արդյունքներ, որոնք ներառում են գիտելիքներ, հմտություններ ու վերաբերմունք և կապված են կրթության ազգային նպատակների և հասարակական կյանքում դրական մասնակցության հետ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից Կրթության մասին օրենքում լրացումներ անելու համար ներկայացված հիմնավորման մեջ ևս նշվում է, որ կրթության որակի չափանիշները ժամանակի ընթացքում փոխվում են և հասկացությունների օրենսդրական սահմանումը փորձ է համահունչ քայլել այդ իրողություններին: Այստեղից կարելի է ենթադրել, որ որակի հետ կապված նոր իրողությունների ի հայտ գալուն զուգահեռ օրենքի համապատասխան կետը կամ կարող է փոխվել կամ լրացվել: Այս հիմնավորման մեջ խնդրահարույց է հետևյալ նախադասությունը. «Որակյալ կրթություն նշանակում է, որ տվյալ երկիրը կրթության միջոցով կարողանում է հիմնականում հասնել իր սահմանած նպատակներին, իսկ մանկավարժական աշխատողները կարողանում են սովորողին հասցնել սահմանված արդյունքներին»: Կարծում ենք, որ օրենքի լրացման հիմնավորողները սրանով բավականին նեղացրել են կրթության որակ հասկացությունը և որակյալ կրթության ամբողջ պատասխանատվությունը դրել հենց պետության ուսերին:

2013թ. 21-24 նոյեմբերին եվրոպական երիտասարդական ֆորումում ընդունված «Կրթության որակի» մասին փաստաթուղթ: Փաստաթղթում նշվում է, որ կրթության որակ հասկացությունը հասարակության և քաղաքականություն որոշողների կարևորագույն

խնդիրներից է և չկա կրթության որակի մեկ ընդհանուր սահմանված հասկացություն, քանի որ դրա բովանդակությունը փոխվում է՝ կախված պայմաններից, միջավայրից ու ակնկալվող արդյունքներից: Երիտասարդական ֆորումը բնականաբար մեծ տեղ է հատկացնում ոչ միայն ֆորմալ, այլ ոչ-ֆորմալ կրթության տարատեսակ ձևերի զարգացման կարևորությանը:

Վերջին տարիներին անընդհատ շեշտվում է, որ կրթությունը ուսուցակենտրոնությունից, որը 19-րդ դարի պրուսական կրթական մոդելն է, պետք է փոխակերպվի դեպի աշակերտակենտրոն համակարգի, ինչը շատ դեպքերում չի իրագործվում: Հայաստանյան կրթական համակարգը հիմնականում ուսուցչակենտրոն է, որտեղ գործում են համահարթեցված պահանջներ բոլոր աշակերտների ու ուսանողների համար և հաշվի չեն առնվում անհատական առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ բոլոր սովորողների վերջնարդյունքը նույնն է ու չկան հստակ ու տարբերակված մոտեցումներ տարբեր ունակությունների ու գիտելիքների տեր սովորողների գիտելիքների չափման համար: Ուսուցչակենտրոն մոտեցումը օտարում է սովորողին կրթությունից, դառնում խոչընդոտ երիտասարդների համար, ինչպես նաև հակասության մեջ մտնում կրթության ներառական, մասնակցային սկզբունքների հետ, ինչը պետք է թելադրված լինի ժամանակակից ժողովրդավարական սկզբունքներով ու մոտեցումներով:

Կրթության մատչելիության խնդիրը ևս ակտուալ է Հայաստանի համար, չնայած նրան, որ ռասայի, սեռի կամ սեռական կողմնորոշման հիման վրա խտրականության դեպքեր հայտնի չեն, այնուհանդերձ դեռևս լուծված չէ սահմանափակ կարողությունների տեր մարդկանց կրթության մատչելիության, ինչպես նաև սոցիալական հողի վրա կրթության անմատչելիության խնդիրը:

Կրթության որակի ապահովման համար պետք է պահպանվեն հետևյալ սկզբունքները՝

- Կրթությունը պետք է ուսուցչակենտրոնից վերածվի աշակերտակենտրոնի և հաշվի առնվեն սովորողների միջավայրի առանձնահատկությունները,
- Կրթական համակարգերը պետք է դառնան ներառական, ոչ խտրական, ճկուն և պետք է խուսափել բոլորի համար պարտադրվող մեկ ձևի կրթությունից,

- Կրթական գործընթացը պետք է դիտարկվի ոչ թե մեկանգամյա գործընթաց, այլ ողջ կյանքի ընթացքում շարունակվող պրոցես, որտեղ անձը շարունակաբար զարգացնելու է իր գիտելիքներն ու ունակությունները և ադապտացվի փոփոխվող աշխարհի պահանջներին, մշակույթին, հասարակությանը:

Կրթության կենտրոնում պետք է լինի սովորողը, որին հնարավորություն կտրվի պատասխանատվություն կրել իր կրթության համար, ինչն իր հերթին ուժեղացնում է սովորողի վստահությունը իր ուժերին ու մոտիվացիան սովորելու նկատմամբ: Նման մոտեցմամբ կրթական գիտելիքները և փորձառությունն ավելի են մոտենում սովորողի և հասարակության իրական խնդիրներին:

Կրթության որակի սկզբունքերը

Մատչելիություն: Մատչելիությունը շարունակում է մնալ Հայաստանի կրթական համակարգի խնդիրներից մեկը տարաբնույթ պատճառներով: Դրանց շարքին են դասվում կրթություն ստանալու հետ կապված խոչընդոտները (ներառյալ թաքնված ծախսերը), ծախսերը, կոռուպցիոն խնդիրները, ուսման վարձեր: Այս խնդիրները հաղթահարելու միջազգային փորձը կրթության մատչելիության ապահովումն է՝ առանց որևիցե խտրականության: Սովորողը պետք է իրավունք ունենա ընտրելու և սովորելու իր կարիքներին, անձնական ունակություններին ու նկրտումներին համապատասխան կրթական ոլորտում: Այսօր ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ ֆինանսական կամ այլ խնդիրների պատճառով կրթությունը և, հատկապես որակյալ կրթությունը մատչելի չէ հասարակության բոլոր շերտերին:

Հավասարություն և ներառում: Բոլոր երիտասարդներին կրթություն հասանելիության ապահովման կարևոր սկզբունքներից է վաղ հասակից հավասար հնարավորությունների ապահովումը: Նրանք պետք է վստահ լինեն, որ որևէ անձնական կամ սոցիալական հանգամանք (սեռ, ռասա, ինքնություն, հաշմանդամություն, էթնիկական ծագում կամ կրոնական պատկանելիություն) չի կարող խաչընդոտ հանդիսանալ կրթական հնարավորությունների և ցանկությունների իրացման համար: Նման հնարավորություններ ունեցող երիտասարդները կարող են դառնալ ինքնուրույն, մոտիվացված և պատասխանատու քաղաքացիներ: Պետությունը պետք է ունենա

հնարավոր քաղաքականություն չներառվածության ռիսկի գոտում գտնվող քաղաքացիների համար հնարավորություններ ստեղծելու համար:

Հասարակական ազդեցություն: Կրթությունը պետք է համապատասխանի տվյալ հասարակության հիմնական կարիքներին ու նպաստի նրա զարգացմանը, ինչը պահանջում գիտակցել տվյալ համայնքի/հասարակության կարիքները, ինչպես նաև սովորողների սոցիալ-մշակութային պայմաններն և միջավայրի առանձնահատկությունները:

Մասնակցայնություն: Սովորողը պետք է իրավունք ունի ներգրավված լինելու կրթական գործընթացի բոլոր փուլերում՝ ծրագրի մշակումից մինչև որոշումների կայացման գործընթաց, ինչպես տվյալ կրթական համակարգի շրջանակում, այնպես էլ քաղաքականության մշակման համատեքստում: Սեփական կրթական գործընթացին մասնակցությունը կբարձրացնի սովորողների մոտիվացիայի մակարդակը, կապահովվի թափանցիկություն այլ սովորողների համար և կապահովի կրթական վերջնարդյունքների կայունություն և զարգացում: Հայաստանյան կրթական համակարգում վերջին տարիներին ֆորմալ առումով սովորողները ներգրավված են որպես շահառուներ տարբեր մակարդակի որոշումների կայացման գործում, սակայն իրականում նրանց շատ քիչ ազդեցություն են ունենում կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունների, քաղաքականության մշակման և կառավարման հարցերում:

Կրթական գործընթացի մասնակիցների ակտիվ համագործակցություն: Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ նրանք պետք է դառնան այդ գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ ու իրավասության շրջանակով: Այս սկզբունքի համաձայն սովորողի ու ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք, քանի որ կրթողները իրենց ևս սովորողներ են և սովորողը կարող է աղբյուր հանդիսանալ կրթողի համար նոր գիտելիքների ձեռքբերման համար: Այս իմաստով հայաստանյան կրթական համակարգի տարբեր աստիճաններում կա հստակ օտարվածություն սովորողի ու կրթողի միջև, ինչը բերում է նրան, որ ոչ կրթողը և ոչ սովորողը չեն ունենում համապատասխան մոտիվացիա ու պատասխանատվություն կրթական գործընթացի նկատմամբ:

Համագործակցություն կրթական հաստատությունների միջև: Հայաստանյան կրթական հաստատությունների (նաև ոչ ֆորմալ կրթություն ապահովողների) միջև տեղի ունեցող համագործակցությունը ոչ բավարար է կամ գոյություն չունի, ինչը հնարավորություն չի տալիս համատեղել ունեցած ռեսուրսները և ավելացնել կարողությունները տարբեր կրթական ծրագրերի իրականացման ժամանակ: Նույնը վերաբերում է նաև տեղական ու միջազգային կրթական հաստատությունների համագործակցությանը, ինչը սահմանափակվում է տարբեր միջազգային կրթական ծրագրերի շրջանակներում քչաքանակ ուսանողների փոխանակմամբ: Համագործակցությունը կարևոր է տարատեսակ ռեսուրսների օգտագործման հնարավորության տեսանկյունից, քանի որ, որոշակիորեն մեկուսացած լինելու պատճառով, շատ կրթական հաստատություններ սահմանափակվում են միայն նախկին խորհրդային երկրների հետ համագործակցությամբ ու բաց թողնում նոր հնարավորություններ:

Կրթական ցանկալի արդյունքներ ստանալու կարևորագույն նախապայմաններից է **աշակերտակենտրոն ուսուցումը**, որը պետք է ուղեկցվի մասնակցայնությամբ և կրթողի և սովորողի միջև համագործակցությամբ:

ՀՀ Կրթության և Հանրակրթության մասին օրենքները չեն սահմանում «սովորող» հասկացությունը: ՀՀ օրենքը ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. Պետական ծրագիրը հաստատելու մասին ևս չի սահմանում սովորող հասկացությունը: Հանրակրթության մասին օրենքի հոդված 19-ում որպես կրթական գործընթացի մասնակից նշվում է առաջինը սովորողը, բայց սկզբում սովորողի սահմանումը չկա: Մինևույն ժամանակ դպրոցների ներքին գնահատման համակարգում նշվում է. «Ներքին գնահատման չափանիշները բխում են հանրակրթության պետական չափորոշչով սահմանված պահանջներից և ներառում են՝ սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը, արժեքային համակարգի ձևավորումը, սովորողների զարգացմանն ուղղված գործողությունների առաջնայնությունը, ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային ծրագրում դրանց արտացոլումը, իրականացման արդյունավետությունը»: Այնուամենայնիվ այս սահմանման մեջ նշված հասկացություններից շատերը սահմանման կարիք ունեն, այլապես կարող են մեկնաբանվել կամայականորեն, ինչպես օրինակ արժեքային համակարգի ձևավորումը:

Կրթող/սովորող համագործակցությունը պետք է հիմնված լինի հստակ ընթացակարգերով, որտեղ սովորողը պետք է հնարավորություն ունենա **կարծիք գրել** կրթական գործընթացի, իր փորձառության, ինչպես նաև կրթողի որակական ու մասնագիտական հատկանիշների մասին: Սովորողներին որոշակի վերահսկողական գործառույթների տրամադրումը հնարավորություն է կրթական գործընթացը դարձնել առավել թափանցիկ, զարգացող, մոտիվացված ու պատասխանատու:

Սովորողներին պետք է հնարավորություն ընձեռվի մասնակցելու երկարաժամկետ ու կարճաժամկետ փոխանակման ծրագրերին: Նմանատիպ ծրագրերի արդյունքում սովորողները զարգացնում են իրենց միջմշակութային ճանաչումը, առավել հարգանքով վերաբերում այլոց մշակույթներին, ինչը էական է հետագայում նորմալ հասարակարգ կառուցելու համար: Նման շփումները սովորողներին դարձնում են առավել պահանջատեր իրենց կրթական գործընթացի նկատմամբ, որով առավել խթանում են կրթական պրոցեսի ու նրա բաղադրիչների զարգացմանը:

Կրթական գործընթացի մեկ այլ կարևոր հատկանիշներից է քննական մտածողության, նորարարական ու ստեղծագործական մոտեցումների խրախուսումը և զարգացումը սովորողների շրջանում: Նշված հատկանիշների զարգացման տարբեր մեթոդներ են կիրառվում, որոնք ներառում են բարձրագույն տեխնոլոգիաները, արվեստը և այլն:

Կրթական միջավայր (ֆիզիկական և հոգեբանական):

ՀՀ Կրթության և Հանրակրթության մասին օրենքները չեն սահմանում «կրթության միջավայր» հասկացությունը և չեն օգտագործում այդ հասկացությունը: ՀՀ Կրթության մասին օրենքը չի սահմանում «կրթության միջավայր» հասկացությունը և չի օգտագործում այդ հասկացությունը: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 22-րդ հոդվածը կրթական միջավայր հասկացությունը սահմանափակում է սովորողների ֆիզիկական առողջության պայմաններով և չի անդրադառնում կրթական միջավայրի այլ բաղադրիչների: Դպրոցների ներքին գնահատման համակարգը ևս հիմնական շեշտադրումն անում է ֆիզիկական առողջության վրա:

Աջակցող կրթական միջավայրը կրթական գործընթացի կարևորագույն կողմերից է, որտեղ պետք է գերիշխի փոխադարձ վստահության մթնոլորտը, հարգանքը, ինչն իր հերթին խթան է հանդիսանում ստեղծագործականության և ինքնուրույնության համար: Այն իր հերթին կարևորում է կոլեկտիվ ուսուցումը և ամրապնդում սովորողների միջև հարաբերությունները:

Կրթական միջավայրում պետք է տեղ գտնեն ժողովրդավարական և ոչ-խտրական սկզբունքները, բազմազանությունը և հանդուրժողականությունը: Կրթական միջավայրում պետք է տեղ չգտնեն որևէ տեսակի բռնություն, չարաշահում, արհամարհանք կամ շահագործում:

Կրթական գործընթացի կարևորագույն բաղադրիչ են հանդիսանում տարածությունը, ենթակառուցվածքները, տեխնիկական հագեցվածությունը, որոնք մշտապես պետք է զարգանան՝ համապատասխանելով սովորողների նոր պահանջներին ու ժամանակի թելադրանքին:

Կրթական միջավայրի կարևոր բաղադրիչ է կրթողի և սովորողի ինքնուրույնությունը, որը նրանց հնարավորություն է տալիս առավել աղեկվատ պատասխանել նոր մարտահրավերներին ու խնդիրներին: Կրթական գործընթացում կարևոր է ոչ միայն սովորողների ուղղակի ներգրավվածությունը որոշումների կայացման, վերջնարդյունքների ձևավորման և որակյալ կրթություն ապահովելու համար, այլև որոշակի կրթական մակարդակներում այդ գործընթացին պետք է ներգրավված լինեն նաև ծնողները:

Կրթության կազմակերպման գործընթացը:

Կրթության մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է կրթության գործընթացի կազմակերպումը, որտեղ հիմնականում նկարագրված է գործընթացը՝ ուսումնական պլաններ, ժամանակացույց, ուսումնական ծրագրեր և այլն: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 17-րդ հոդվածը ևս անդրադառնում է կրթության կազմակերպման գործընթացին՝ նշելով, որ խմբային, անհատական ուսուցման եղանակները, դասարաններ և գործընթացի այլ բաղադրիչներ, սակայն հիմնական ծանրությունը թողնվում է կրթության պետական չափորոշիչին: Օրինակ, դասարանների բազմաքանակությունը էական գործոն

է, որն ազդում է որակի ապահովման վրա, սակայն այս մասին իրավական փաստաթղթերը բավականին քչախոս են:

Ուսումնառության գնահատված արդյունքները:

ՀՀ Կրթության մասին օրենքը չի սահմանում «ուսումնառության գնահատված արդյունքները» հասկացությունը: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 18-րդ հոդվածը զուտ ֆորմալ առումով նշում է սովորողների գնահատման համակարգի մասին: Դպրոցի ներքին գնահատման փաստաթուղթը հաստատության առաջադիմությունը կապում է հիմնականում գերեզանց սովորողների թվաքանակի հետ: Հետաքրքրական է, որ գնահատված արդյունքների ցուցիչների մեջ նշվում է նաև կրկնուսույցների մոտ սովորողների թիվը, ինչը իրականում հնարավոր չէ պարզել և նման հետազոտություններ պետական մակարդակով չեն իրականացվում: Հաշվի առնելով նաև դպրոցների ֆինանսավորման նախկին կարգը՝ դպրոցներում սովորողներին անբավարար գնահատականներ չէին նշանակում, ինչը ևս ազդում է իրական պատկերի վրա: Նույնը կարելի է պնդել այլ ցուցիչների հետ կապված, դասերից բացակայություններ, որոնք հաճախ չեն ֆիքսվում, վաղաժամ դասարանից դասարան տեղափոխվածներ, ուսումնական վարտ թողածներ (որոնք տարբեր պատճառներով են կիսատ թողում) և այլն:

ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. Պետական ծրագիրը հաստատելու մասին ՀՀ օրենքի 5-րդ բաժնի 11րդ կետը սահմանում է. «Որակի ապահովման կարևոր բաղադրիչ է գնահատման համակարգը, որը պետք է ներառի ինչպես հստակ սահմանված վերջնարդյունքների, այնպես էլ ուսումնառության միջավայրի և գործընթացի գնահատումը»:

Կրթության որակի բաղադրիչների ընկալումները Հայաստանի հանրակրթական համակարգում

Կրթություն որակի ընկալումները փորձել ենք վերլուծել երեք մակարդակներում՝ օրենսդիրի, գործադիրի և իրականացնողների՝ այսինքն՝ դպրոցների տնօրենների և ուսուցիչների:

Օրենսդիրի մակարդակում փորձել ենք հասկանալ, թե որտեղից է ծագել նման օրենսդրական նախաձեռնությունը և ինչ նպատակ է այն հետապնդել: Օրենսդրական նախաձեռնության հեղինակները նշում են, որ նման անհրաժեշտություն է ի հայտ եկել կրթության որակի չափորոշիչներ չունենալու և բարեփոխվող կրթական համակարգում այդ խնդրին ուշադրություն չդարձնելու համար: Եթե խորհրդային շրջանում գոյություն ունեին երկու չափելիներ՝ առաջադիմություն, որը չափվում էր գնահատականների հիման վրա և որակ, որը բխում էր առաջադիմությունից, ապա բարեփոխված համակարգում գնահատման համակարգը տարբեր է, ինչն էլ առաջ է բերել նախկին չափելիների ուժը կորցնելուն՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով նաև այն, որ այդ մեթոդաբանությունը հնացել է և չի համապատասխանում նոր կրթական համակարգի պահանջներին: Այսինքն, կրթության որակը չափվում էր «չոր» թվերով, եթե դպրոցը ապահովում էր կանխատեսելի թիվը, ապա ենթադրվում էր, որ կրթության որակը ապահովված է: Նման համակարգը բազմաթիվ թերություններ ուներ, իսկ ժամանակակից կրթական բարեփոխումների պարագայում խնդիրը առավել է բարդանում, քանի որ որոշ դեպքերում գնահատվում է 10 բալանոց, որոշ դեպքերում՝ 20 բալանոց կամ 100 բալանոց համակարգով, որին գումարվելու է գալիս կրեդիտային համակարգը: Այս ամբողջի մեջ դժվար է թվային պատկեր ստանալ և դրանով բնորոշել կրթության որակը:

Օրենսդրական նախաձեռնության հեղինակները նշում են, որ կրթության որակի սահմանումը հինգ ցուցիչներով նպատակ է հետապնդել հստակություն մտցնել այս ոլորտում և կրթության որակի պատասխանատվության խնդիրը լուծել: Այսօր կրթության որակի պատասխանատվության մասով խնդիր կա, քանի որ կրթության տեսչությունը համարում է, որ հանրակրթության ոլորտում կրթության որակի պատասխանատուները ուսմասվարներն են, որոնց էլ հանձնարարված է հետևել կրթության որակին: Մակայն երբ հստակ չափելիներ չկան, ապա այդ հանձնարարականը մնում է թղթի վրա, իսկ ուսումնասվարներից շատերը փորձում են այս հարցում առաջնորդվել հին խորհրդային թվային մեթոդաբանությամբ: Միևնույն ժամանակ նրանց մեծամասնությունը տեղյակ չէ, կրթության որակի նոր սահմանումից և մասնագիտական պատրաստվածություն չունի օրենքով սահմանված նոր չափելիներով առաջնորդվելու համար:

Կրթության որակի սահմանման հեղինակները գտնում են, որ կրթության նպատակը նախապես ցանկալի ու կանխատեսելի արդյունք ստանալն է: Պետք է նշել, որ

օրենքի հեղինակները բավականին լավ ծանոթ են Յունիսեֆի կրթության որակի հինգ բաղադրիչներին: Օրինակ, կրթության միջավայր հասկացությա տակ հասկանում են ոչ միայն ֆիզիկական պայմանները, այլ նաև միջանձնային հարաբերությունները, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ հարաբերությունները, թեքահարթակները, ինչպես նաև կարևորում են ուսուցման անհատականացումը: Չնայած այս ամենին, պետք է նշել, որ օրենսդրական փոփոխության հեղինակները օրենքում կրթության որակի սահմանումը տալուց հետո, աշխատանքի հիմնական բեռը թողել են պատասխանատու մարմնի՝ կրթության և գիտության նախարարության վրա, որն էլ պետք է մշակի այդ հինգ չափելիների ինդիկատորները, ինչն այդքան էլ դյուրին գործ չէ:

Գործադիր մարմինը, օրենքի ընդունումից հետո, աշխատում է հինգ չափելիների ինդիկատորների մշակման վրա, որոնց հիման վրա էլ հանրակրթական համակարգում պետք է որոշվի կրթության որակը: Գործադիր մարմնի ներկայացուցիչների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանք չեն պատրաստվում նոր չափելիների հետ կապված նոր ընթացակարգեր սահմանել, այլ պնդում են, որ նման ընթացակարգեր գոյություն ունեին դեռևս մինչև օրենքում կրթության որակի սահմանումը: Այդ ընթացակարգերը դպրոցների ներքին գնահատման համակարգն է, որը, ըստ նրանց, կատարվում է հենց այդ չափելիների հիման վրա ու խնդիր չկա նոր ընթացակարգեր մշակելու: Միննույն ժամանակ, նրանք դժվարացան պատասխանել այն հարցին, թե արդյոք ներքին գնահատման այդ համակարգը կարելի է կրթության որակի ցուցիչ համարել՝ նշելով, որ ընդհանրապես դժվար է կրթության որակի կոնկրետ ցուցիչների մշակումը, որը ոչ միայն դժվար է, այլև գործնականում անհնար: Որոշ դպրոցների ներքին գնահատման մասին փաստաթղթերը ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ այստեղ առկա են նշված բոլոր հինգ չափելիները և այդ փաստաթղթից դատելով կարելի է ասել, որ դպրոցներում ուղղակի իդեալական վիճակ է կրթական միջավայրի, անվտանգության, կրթության որակի, վերջնարդյունքների և այլ ցուցանիշների առումով: Հետաքրքրական է, որ, օրինակ ուսուցիչների որակի և նրանց գործունեությունը բնութագրող ցուցանիշների մեջ են մտնում նաև «նախարարության, ինչպես նաև նախարարության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համատեղ անցկացվող մրցույթներին մասնակցած ուսուցիչների թիվը և տոկոսը», ինչը, մեղմ ասած, հակասում է կրթության աշխարհիկ բնույթին: Առկա են նաև այսպիսի հավաստումներ. «Դպրոցն ունի որակյալ ուսուցչական անձնակազմ.

ուսուցիչները տիրապետում են դասավանդման ժամանակակից մեթոդներին, կիրառում են ուսուցման կոլեկտիվ եղանակին բնորոշ աշակերտակենտրոն, համագործակցային ուսուցման մեթոդներ, կազմակերպում կոլեկտիվ ուսումնական պարապմունքներ՝ անհատական ուսումնական ծրագրերով»: Նմանատիպ նախադասություններ կարելի է գտնել այլ դպրոցների ներքին գնահատման փաստաթղթերում, ինչը ենթադրում է, որ դպրոցների մեծ մասում ուղղակի նախանձելի իրավիճակ է, սակայն ԿԳՆ կամ վարչապետի հայտարարություններից պարզ է դառնում, որ դպրոցներում առկա իրավիճակը չի համապատասխանում այս փաստաթղթերում նշված իրադրությանը: Դիտարկված դպրոցների ներքին գնահատման փաստաթղթում նշվում է, որ դպրոցը ապահովել է այնպիսի կրթական միջավայր, որը երաշխավորում է որակյալ կրթություն: Դատելով այս փաստաթղթերից աշակերտները և աշակերտական խորհուրդները լիովին ինքնավար են և ազդեցություն ունեն դպրոցում կայացվող որոշումների վրա:

Մի քանի դպրոցների ներքին գնահատման փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, չնայած այն պարունակում է դրույթներ օրենքում ընդունված հինգ չափելիների վերաբերյալ, սակայն չկա միասնական գնահատման համակարգ ու դա չի արտահայտում օրենքում ամրագրված այն դրույթը, որ դրանք կրթության որակի չափելիներ են: Բացակայում է նաև այդ չափելիների հանրագումարը թե առանձին դպրոցների և թե հանրապետական մակարդակով, որը ենթադրվում էր ունենալ օրենքում կրթության որակի սահմանումից հետո: Այս տեսանկյունից կարծում ենք, որ, չնայած այս ներքին գնահատման փաստաթղթերի իդեալիստական բնույթին, ան չի արտացոլում հնարակրթության բնագավառում տիրող իրական իրավիճակը և ցույց չի տալիս կրթության որակը:

Կրթության որակի ընկալման հիմնական խնդիրը հենց **իրականացնողների մակարդակում** է, քանի որ դպրոցի տնօրենների ու ուսուցիչների ճնշող մեծամասնությունը որևէ պատկերացում կամ տեղեկություն չունեն իրականացված բարեփոխումների և առավել ևս այն մասին, որ օրենքով սահմանվել է կրթության որակ հասկացությունը: Ուսուցիչների մեծ մասը հենց իրենք են բողոքում ժամանակակից կրթական համակարգից, դրա բաղադրիչներից, ծրագրերից և հատկապես դասագրքերի որակից: Կրթության որակ հասակցությունը ուսուցիչների համար առաջին հերթին հենց դասագրքերն են ու դրանցում առկա նյութի անհամապատասխանությունը

աշակերտների սեռատարիքային պահանջներին: Նրանք գտնում են, որ դասագրքերի բեռնաթափումն ու պարզեցումը հիմնական խոչընդոտն է որակյալ կրթություն ունենալու համար, քանի որ դասագրքերի հեղինակները «իրենց ատենախոսությունները ներակայացնում են որպես դասագիրք, որի պատճառով էլ դասագրքերը ակադեմիական ոճով են ներկայացված»:

Դասագրքերի փորձաննությունը լավ չի կատարվում, նյութը կրկնվում է, որի պատճառով թե ուսուցիչները և թե աշակերտները հոգնում են մատուցվող նյութից: Միևույն ժամանակ նշում են, որ տրված ժամաքանակը չի համապատասխանում դասագրքերի բովանդակությանը և երբեմն նրանք հավելյալ պարապմունքներ են անցկացնում առանց վճարվելու: Որպես կրթության որակի վրա ազդող ուսուցիչները նշում են միջառարկայական կապերի բացակայությունը, ինչը պայմանավորում են դասագրքերով ու թերի մշակված կրթական ծրագրերով: Բացի այդ, ուսուցիչները դժգոհում են գույքային ու նյութատեխնիկական բազայից. «ռազմագիտության ուսուցիչը նկարում է զենքը, որպեսզի կարողանա դասը բացատրել կամ քիմիայի ուսուցչուհին ասում է, երեխաներ, որ ունենայինք այս նյութը և խառնեինք մյուս նյութին, հետևյալ արդյունքը կունենայինք»: Դպրոցների մեծամասնությունը ապահովված չէ անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, շատ դպրոցների հիգիենիկ վիճակը, մեղմ ասած, չի համապատասխանում նվազագույն պահանջներին: Հայաստանի շատ դպրոցներ չունեն նորմալ կահավորված համակարգչային սենյակներ, իսկ գոյություն ունեցող համակարգիչները վաղուց բարոյապես մաշվել են: Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների Հայաստանում 2017թ. հունվար-մարտ ամիսների դրությամբ 428 դպրոց կարիք ունի հիմնանորոգման, 71 դպրոց չունի ջրամատակարարում, իսկ 141 դպրոցներում ընդհանրապես բացակայում է կոյուղին: Գազմատակարարումը բացակայում է 416 դպրոցներում, 479 դպրոց ջեռուցվում է էլեկտրաջեռուցիչներով կամ վառարաններում, իսկ 8-ում ընդհանրապես չկա ջեռուցում⁵:

Աշակերտների հետ կապված ուսուցիչները նշում են մի շարք առանձնահատկություններ: Սոցիալական վիճակը էական ազդեցություն է ունենում կրթության մոտիվացիայի վրա: Աշակերտների ծնողներից շատերը չեն կարողանում

⁵ Տե՛ս http://armstat.am/file/article/sv_03_17a_5150.pdf.

տարրական խնդիրներ լուծել հագուստի, սնունդի ու գրենական պարագաների հետ կապված: Օրինակ, շատ ծնողների համար ֆինանսական բեռ է թեմատիկ աշխատանքների համար վաճառվող դասընթացների տետրերը: Շատ աշակերտներ առավոտյան գալիս են դպրոց թերսնված, ինչը ազդում է նրանց կենտրոնացվածության ու առաջադիմության վրա: Կախված տարիքային խմբից երբեմն նկատվում է որոշակի անհանդուրժողականություն սեռերի միջև կամ ուրիշ դպրոցից տեղափոխված աշակերտների նկատմամբ: Անհանդուրժողականությունն առավել տեսանելի է ավագ դպրոցներում, երբ տարբեր դպրոցների աշակերտներ հանդիպում են իրար և սկսվում է «դիրքային պայքար», ինչն ազդում է ուսումնական գործընթացի վրա:

Որոշ դպրոցների տնօրեններ նշում են, որ իրենք անհատապես են աշխատում յուրաքանչյուր աշակերտի հետ, գիտեն նրանց ընտանեկան ու սոցիալական վիճակը, ինչը երբեմն օգնում է անհատական մոտեցումներ ցուցաբերելու համար: Աշակերտները գիտելիքներ ու կյանքի հմտություններ չեն ստանում իրենց քաղաքացիական պարտավորությունների ու իրավունքների մասին և չեն դաստիարակվում որպես երկրի քաղաքացիներ, այլ դպրոցում սովորելուն վերաբերում են որպես մեխանիկական մի գործընթաց, ինչն էլ իր հերթին ազդում է ուսումնական գործընթացի արժեքի ու այդ արժեքի հիման վրա ձևավորվող կենսագործունեության հետագա հնարավորությունների վրա:

Ուսուցիչներից շատերը պատկերացում չունեն իրենց առաքելության մասին և ինչպիսի աշակերտ են պատրաստում երկրի համար: Ուսումնական առարկաներից շատերը աշակերտներին տրվում են զուտ մեխանիկական եղանակով և դրանց զուգահեռ չի բարձրանում նրանց քաղաքացիական իրավագիտակցությունը կամ կյանքի ու կենսագործունեության համար անհրաժեշտ հմտություններն ու գիտելիքները: Միննույն ժամանակ, ՀՀ հանրակրթական դպրոցում կրթությունը չի համապատասխանում միջազգային փաստաթղթերով սահմանված սկզբունքներին, օրինակ սովորողները բավարար գիտելիքներ չեն ստանում այլ մշակույթների, կրոնների, երկրների մասին, որի պատճառով էլ սովորողները պատրաստ չեն լինում կամ առավելապես անհանդուրժող են այլ մշակույթների, կրոնների, ազգերի նկատմամբ: Որոշ դպրոցներում պահպանվում են «տեր թողիկյան» մեթոդները, իսկ սովորողները, տեղյակ չլինելով իրենց իրավունքներին,

չեն բարձրաձայնում այդ մասին: Ընդհանրապես, սովորողները բավականին անտարբեր են ուսումնական գործընթացի նկատմամբ և որևէ կերպ չեն ազդում դրա բարեփոխմանը:

Միննույն ժամանակ, հանրակրթության ոլորտում նոր խնդիրներ է առաջացնում սովորողների քանակով դպրոցներին տրվող ֆինանսավորումը, երբ դպրոցի տնօրինությունը շահագրգռված է մեծ թվով աշակերտներ ներգրավել դպրոցում և չկորցնել գոյություն ունեցողներին: Այդ նպատակով դպրոցի տնօրենները հաճախ ներքին կարգով արգելում է ուսուցիչներին ցածր գնահատականներ նշանակել աշակերտներին, որպեսզի նրանք չտեղափոխվեն այլ դպրոց: Դպրոցներին ընդհանրապես վերացել է «նույն դասարանում մնալու» երևույթը: Ուսուցիչները դժգոհում են, որ իրենց զրկված են բոլոր տեսակի լծակներից աշակերտների վրա ազդելու համար, քանի որ աշխատում են ճնշման տակ թե ծնողների և թե դպրոցի ղեկավարության կողմից, ինչն էլ նրանց հավելյալ անգամ զրկում է մոտիվացիայից առեվալե լավ աշխատելու և իրենց գիտելիքները փոխանցելու սովորողներին:

Ընդհանրապես, ուսուցիչների հետ մեր հանդիպումները ցույց տվեցին, որ նրանց ճնշող մեծամասնությունը ծանոթ չէ կրթության որակի նոր սահմանմանը և կրթության որակը սահմանափակվում է դասագրքերով ու ուսումնական ծրագրերով, կրթական միջավայրի պատկերացումները բավականին սահմանափակ են, իսկ ուսուցման աշակերտակենտրոն համակարգի մասին պատկերացումները աղոտ են և ուսուցումը կատարվում է նախկինում կիրառվող մեթոդաբանությամբ:

Առաջարկություններ

Կրթության և գիտության նախարարություն

1. Մշակել արդյունավետ գնահատման համակարգ հանրակրթության համակարգում որակի ապահովման համար՝ համաձայն ԱԺ կողմից ընդունված օրենքի պահանջները,
2. Կազմակերպել լայն հանրային քննարկումներ գնահատման նոր համակարգի ենդրումից առաջ՝ ընդգրկելով կրթության ոլորտի փորձագետների, ուսուցիչների, կրթության կազմակերպիչների, կրթության ոլորտում շահագրգիռ կազմակերպությունների,
3. Գնահատման համակարգի ներդրման գործում կարևորել կրթությունը որպես շարունակական և կյանքի հմտություններ ուսուցանող գործընթաց,
4. Գնահատման համակարգը կառուցել ոչ թե ուսուցակենտրոն, այլ աշակերտակենտրոն մոտեցմամբ,
5. Կատարել գնահատման նոր համակարգի փորձաքննություն Երևանի ու երկու մարզերի դպրոցներում, որից հետո լրամշակել և նոր ներդնել հանրակրթության համակարգում,

Կրթության ազգային ինստիտուտ

1. Կազմակերպել ուսուցումներ և դասընթացներ հանրակրթության ոլորտի բոլոր դպրոցների ներգրավմամբ՝ կրթության որակի գնահատման նոր համակարգի բոլոր մանրամասները ուսուցանելու համար,
2. Ապահովել ծնողների և աշակերտների բավարար տեղեկացվածության մակարդակ՝ կրթության որակի գնահատման չափելիների ու արդյունքների մասին,

ՀՀ Ազգային Ժողով

1. Ձեռնարկել անհրաժեշտ քայլեր օրենսդրական փոփոխությունների արդյունքում կրթության որակի սահմանումը կյանքի կոչելու համար ու պարտադրել ԿԳՆ-ին մշակելու կրթության որակի չափելիների գնահատման համակարգ: